



ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

Ս. ԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՖԱՂԱՔԱԿԱՆ

ՄԱՍԻՍ կը հրատարակուի ի կ. Պոլիս, ամէն ամսոյ 1ին և 15ին:

Հասցէ՝ Կ. Պոլիս, Ղալաթիոյ Նորատունկի թաղ: Զեռքէ կը ծախուի հատը 40 փարայ:

Բաժանորդացին

Պոլիս, տարեկան

Գումաները

Օտար երկրք

մէկ մէջիս:

մէկ քառորդ սակի:

վեց ֆրանք:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, 1 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մասին մէջ հրատարակուեցան Ազգային Հիւանդանոցի մասին մի քանի քննադատական յօդուածներ, միայակի կամ քրոնիկի ոճով. այդ յօդուածներ առանց ուշադրութեան չմնացին, հանրային մտածութեանն առարկայ եղան:

Երբ ազգը չզայրանար Հիւանդանոցին նկատմամբ աննպատ կարծիք յայտնող հրապարակագիրներուն դէմ, պէտք է համոզուի որ յայտնուած կարծիքը կը համապատասխանէ հանրային կարծիքին ու զգացումին:

Հին խմբագիրները դառն փորձառութեամբ գիտեն թէ ի՞նչ փորձանքներու կը հանդիպի լրագրապետ մը կամ հրապարակագիր մը որ կը համարձակի քննադատել Հիւանդանոցի վարչութիւնը:

—Ամէն ինչ քննադատեցէք, միայն Հիւանդանոցէն հեռու կեցէ՛ք, կը խրատէին այդ հին խմբագիրները նորերուն:

Եթէ քննադատէք, կը տեսնէք թէ ի՞նչ կ'ըլլաք:

Քննադատեցին և բան մը չեղան, մանաւանդ որ, քաջալերուելով, աւելի բացարձակօրէն կը պարզեն ճշմարտութիւնը:

Ինչո՞ւ համար ազգը հիմա չզայրանար ընդդէմ անոնց որք կը քննադատեն Հիւանդանոցի վարչութիւնը: —Վասնզի այդ քննադատներու գրութեան մէջ այնպիսի չեղտ մը կայ վշտի ու կարեկցութեան որ ուղղակի սրտերու կը զարնէ: Ընթերցողը կ'ըմբռնէ թէ՛ այդ քննադատութիւնները գրողներն եթէ կը սխալին իսկ—ինչ որ երբեմն կը պատահի—այսուհանդերձ անկեղծ են. զիրենք դրդողը միայն և մի միայն մարդասիրական զգացումն է: Անկեղծօրէն մարդասիրական զգացում մը միշտ կը յարգուի ու կը յաղթանակէ:

Ազգը միւս կողմէ կ'ըմբռնէ նաեւ թէ՛ Մասին յօդուածագիրքը չեն կարծիք արտայայտելի Հիւանդանոցի վարչութեան դէմ այլ կը կուռին. մատակարարական դրութեան դէմ:

Արդարեւ ազնիւ սրտի նշան մը չէ թշնամանել անձնապէս Հիւանդանոցի Հոգաբարձուներն: Այդ հոգաբարձուները կ'աշխատին, կը յոգնին, որպէսզի կարենան խնամել մի քանի հարիւր դժբաղդներ. և որոնք որ կը խնամեն դժբաղդներն միշտ մեր ակնածանքին արժանի են,

ինչ որ ալ ըլլան իրենց թերութիւնները :

Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը պէտք է որ գոհ մնար լրագրական քըն-նադատութիւններէն , վասնզի այդ քըն-նադատութիւններ կարող են սքանչելա-պէս նախատել Հիւանդանոցի վիճակը բար-ւելեալու . բայց Հիւանդանոցի Հոգաբարձ-ններու միտքն այս ճշմարտութիւնն ըմ-բռնելու չափ զարգացած չէ :

Մեր Հիւանդանոցը սպանդանոց մըն է ուր տղան շուտ կը թուի , ուրկէ ծերու-նին աւելի շուտ կը մերձենայ գերեզմա-նին , և հիւանդին համար , որքան ալ թե-թեւ ըլլայ հիւանդութիւնը , մահն աւելի հաւանական է քան փրկութիւնը :

Հիւանդանոցի զարջութիւնը կրնայ պատասխանել թէ ինք ի՞նչ ընէ . ինչ գումար որ ազգը կուտայ , ինք զայդ կը գործածէ . իր բոլոր քանքն է . այդ գու-մարը խնայողաբար բաշխել , երկու ծայ-րերն իրարու բերել , պարտք չընել . օտա-քըզ վերամակիդ չափ երկնցո՛ւր , ա՛յս է նշանաբանն առեւտուրի մէջ մեծցող այդ Հոգաբարձուներուն : Մենք ա՛լ լուսադոյնն ընել գիտենք , կ'ըսեն , բայց ստակով կ'ըլ-լայ :

Մենք ալ կը պատասխանենք : Այո՛ , ամէն ինչ ստակով կ'ըլլայ , բայց ստակն ի՞նչպէս ձեռք բերելու է : Ի՞նչու համար դուք չէք ներկայացներ ազգին ճշգրիտ պատկեր մը Հիւանդանոցի կացութեան . ինչո՞ւ ազգը չգիտնայ Հիւանդանոցի սարսուղեցիկ վիճակն : Երբ ազգը ստոյգ կերպով գիտնայ այդ վիճակն ու անտար-բեր կենայ այն ատեն դուք իրաւունք կ'ունենաք—այն ալ գուցէ—գոհանալ ա-նով զոր կ'ընէք . արդ ձեր պարտակա-նութիւնն է ճշմարտութիւնն ազգին ը-սել , և ոչ թէ զայն ծածկել իրմէ :

Ազգը կը կարծէ թէ՛ այդ Հիւանդա-նոցն արդարեւ մարդասիրական հաստա-տութեան մը կերպարանքն ունի , և ազգը շատ պիտի ապշի եթէ ըսենք որ՝ Հիւան-դանոցի փակումն ամենամեծ ծառայու-թիւն մը պիտի ըլլայ ազգին . այս վի-ճակն ունեցող Հիւանդանոց մը փակելը բարիք մը , և մեծ բարիք մը , գործել է :

Ի՞նչ գիտենք Հիւանդանոցի մասին : Գիտենք թէ Համբարձումին օրը Պատ-րիարքը պատարագ կը մատուցանէ Փրկչի

մատուռին մէջ , Պէզճեանի հոգւոյն պաշ-տօն կը կատարուի , յետոյ սեղան կը տրուի : Եւ ազգին ամենամեծները կը նստին և բաժակներ կ'առաջարկեն : Գի-տենք թէ՛ Սահմանադրութեան տարե-գարձն ալ կը կատարուի Հիւանդանոցի պարտիզին մէջ , նոյն օրն ալ սեղաններ ու բաժակներ , որոց վրայ պէտք է աւել-յնել ճառեր : Գիտենք թէ՛ մի քանի նըն-ջեցեալներու համար ալ երբեմն պատա-րագ կը մատուցուի Փրկչի մատուռին մէջ ու սեղան կը տրուի :

Ասոնցմէ՞ դուրս :

Ասոնցմէ դուրս , երբեմն երբեմն կը հրատարակուին խոյր տեղեկագրեր զոր խթոտ քիչերը կը կարդան , զի խիստ քի-չերը բան մը կը հասկնան :

Չմոռնանք նաեւ որ լրագիրներն ամէն օր կը հրատարակեն նուիրատուներու ա-նուններն :

Ուրիշ ոչինչ գիտենք :

Բայց թէ օր մը միայն անձանթ կեր-պով անցնինք Հիւանդանոցին մէջ , կար-ծեմ թէ սրտերնիս երկար տաւն խորին մեկամոզձութեամբ համակուած պիտի մնայ :

Մտնենք դպրոցը . զանազան կողմերէ հոն հաւաքուած են խեղճ աղաքներ . ի՞նչ կը ճաշեն :

Առաւօտ է : Տէլէ՛ մը չոր հաց . ո՛չ կաթ , ո՛չ սո՛ւրճ , ո՛չ քանչու՛ն , ո՛չ պտուղ . չոր չոր հաց :

Յերեկ է : Տէլէ՛ մը հաց , և քիչ մը ձիթապտուղ եթէ օրն է պահք , խի եթէ ուտիք է՝ քիչ մը պանիր :

Գիշեր է : Տէլէ՛ մը հաց , և տաք տաք կերակուր մը , որ լուբիա է , եթէ պահք է , և բաթաթէս կամ անոր պէս ուրիշ բան մը եթէ ուտիք է :

Այսպէս կը սնանին մեր որբերը :

Եւ ի՞նչ կ'ուզենք որ սորվին այսպիսի անունդ առնող թշուառներն : Ի՞նչպէս զարգանան , աճին ուսմանն :

Մի պատուական հայ ուսուցիչ որ շատ մեծ ծառայութիւններ մատուցած է ազ-գային կրթութեան , և որ կը պաշտու-իր հազարաւոր աշակերտներէ , քանի մը տարի առաջ պաշտօն վարեց Հիւանդա-նոցի դպրոցին մէջ , ու խորապէս զգա-նալ դուրս ելաւ անկէ :

Սիրտ պէտք է որ դիմանայ, կ'ըսէր. դպրոցը կոյանոց մըն է, որուն մէջ կը գեղերին իբր սովորուի շուներ—ներուի բացատրութեանն—անօթի աշակերտներն: Դպրոցին ու ննջարանին մէջ կը տիրէ գարշահոտութիւնն. աշակերտներու մարմինները ծածկուած են վէրքերով. ձկթն ու ձիթապտուղ կ'ապականեն մարմիններն այդ խեղճ տղաքներու. ամէն պահք կը բռնուի: Շատ անգամ երկու աշակերտ կը պառկին միասին. միեւնոյն անկողինին մէջ, անկողին մը որ մէկ տղայ անգամ պարունակելու չաի ընդարձակ չէ:

Բարերարութիւն մը չէ՞ փակել այդ թշուառանոցը, թողուլ աշակերտներն որ երթան բաց օդին մէջ գէթ մեռնին: Չէ, չեն մեռնիր, ամէն ուրեք կրնան գտնել պատառ մը հաց. թող կոշիկ ներկեն, ջուր ծախեն, բեռ կրեն, փողոցները թափառին, այլ թող հեռանան այդ նիւթապէս ու բարոյապէս ապականեալ միջոցաւ:

Տխրապղեցիկ է և ծերանոցն: Ոչ աւաւօտը գաւաթ մը կաթ՝ կայ այդ տառապեալներուն, ո'չ քիչ մը արգանակ, և ոչ ալ ֆլեճան մը քահուէ: Անաւօտը չոր հաց մը, զոր ծամելու անկարող են ծերերը. ցերեկը անապառելի ձիթապտուղը կամ պանիրն, և գիշերը կս'մ լուբիա, կս'մ բաթաթէս:

Չգտնուիր սփռադործերու բանա մը ուր այսպիսի ամարդի կերպով և անգթօրէն սնունդ(°) արուի:

Հիւանդանոցը համեմատօք լաւ է. հիւանդներու պէտքերը քիչ շատ կը հոգացուի. բայց ս'բքան յետամնաց վիճակի մէջ:

Քանի՞ բժիշկ ունի Հիւանդանոցն. երկու օգնականներ որք կարգաւ հոն կը կենան, և որոնք ընդհանրապէս դպրոցէն ելլողներ են. ասոնք Հիւանդանոցը քիչ մը ատեն կը կենան, քիչ մը փորձառութիւն կ'ունենան և յետոյ կը մեկնին: Հիւանդանոցի «պիւտճէն» չներեր աւելի ամսական մը առաւ, իսկ անոնք ալ փոստահ են թէ գուրսն աւելի պիտի կրնան շահիլ: Դարձեալ կուգան նորեկներ որք հիւանդներու վրայ փորձառութիւն պիտի ընեն և երթան, և այսպէս շարունակաբար:

Իսկ իբր բժշկապետ մէկ բժիշկ կայ, որ շաբաթը մի քանի անգամ կ'այցելէ: Անկողններուն քովէ անցնելով պէտք է բժշկէ հիւանդները. կարծես թէ այդ բժիշկը սուաքեալ մը կամ սուրբ մը ըլլար որ իրենց քղանցքովն հիւանդները կը բժշկէին: Աւա՛ղ, Լաբէնիօ՛ր, այդ հրաշքը չգործեր:

Ո՞ր մէկ հիւանդին նայի բժիշկն, ո՞ր մէկ տեսակին վրայ միտք յողնեցնէ: Ամենադէտ է՞ այդ մարդն, ամենապարո՞ղ է:

Ջարմանալի՞ է ուրեմն որ հիւանդներն անխափ կը մնան, զո՛հ կ'ըլլան անհոգութեան, ապիկարութեան, դարմանի պակասութեան:

Նորակառոյց Հիւանդանոցը գուցէ աւելի վատթարացնէ Հիւանդանոցի վիճակըն: Այդ Հիւանդանոցի շինութեան համար ծախս կ'ըլլայ 30.000 ոսկի. բաւական ատեն նուէրները կը դադրին, և տարակոյն չկայ թէ՛ ընթացիկ նուիրատուութիւններու պակասը պիտի պակասեցնէ նաեւ Հիւանդանոցի բարեկեցութիւնն—եթէ երբեք ներելի է այս անունը տալ Հիւանդանոցի կեանքին:

Նոր Հիւանդանոցը հինին տեղը կանգնելն արդէն ամենամեծ սխալ մըն էր. հեռու ամէն կեդրոնէ, հեռու աչքէ, Կ. Պոլսի մէկ հեռաւոր անկիւնն հիւանդանոց կանգնելու համար պէտք է որ Հայքին ունենային Յունաց դրամական կարողութիւնը. քանի որ չունինք այդ կարողութիւն, հարկ էր մեզ աւելի գործնական ըլլալ: Հիւանդանոցը պէտք էր կառուցանել Բերայի մէջ:

Երբ պիտի ձեռնարկուէր այս կառուցումին, այն ատեն Վարչութեան տեսնապէս էր Սիմոն Պէյ Մաքսուտ որ ադամ ջարկեց Հիւանդանոցի հոգաբարձութեան կառուցանել նոր շէնքը Բերայի գերեզմանատան մէջ. ինք Սիմոն Պէյ յանձնառու դ'ըլլար պէտք եղած հրամանը ձեռք բերել, սակայն Հոգաբարձութիւնն ուժգնապէս դիմադրեց այդ գաղափարին. Հիւանդանոցը պէտք էր եղանակաւ ըլլար, եթէ ոչ Հոգաբարձութեան անդամները կը հրաժարէին այս գործի մասնակցութենէ. Վարչութիւնն ի հարկէ ստիպեալ անձնատուր եղաւ:

Ինչո՞ւ համար Հոգաբարձութիւնն ու գեց որ նոր Հիւանդանոցն ալ եկտի-Գու-լէ ըլլայ. կ'երեւի թէ բանաստեղծական զգացումէ միւլած էր: Պէգճեանի հոգին Մարմարայի տիանց վրայ կը յածի՝ կ'ըսէին:

Երբ մեր վաճառականները կ'սկսին բանաստեղծական զգացումներ ունենալ — կամ թէ յաւակնութիւն կ'ունենան թէ ունին այդպիսի զգացումներ — այն ատեն բնական է որ անճոռնի գաղափարներ արտադրեն և աւելի անճոռնի դործեր ամէն մարդ իր սահմանին մէջ մնալը չատ ոգտակար է:

Մենք կը կարծենք թէ, կա՞մ պէտք է Հիւանդանոցը բոլորովին վաղել, կա՞մ պէտք է դայն հիմնովին բարեփոխել, Գուցէ ըսեն թէ վերջինն աւելի դժուար է քան թէ առաջինը. սակայն մենք կը կարծենք թէ հիմնովին բարեփոխելն անկարելի չէ:

Այս բարեփոխութիւնը ձեռք բերելու համար նախ պէտք է բարեփոխել Հիւանդանոցի Հոգաբարձութիւնն:

Այդ հոգաբարձութեան մէջ շատ վաճառական կայ, քիչ մըն ալ ուրիշ տարերքներ պէտք է ներմուծել անոնց մէջ:

Պարագայներու բերմամբ այդ մարդիկ քիչ մը ստակ ձեռք բերած են. պատե-րազմ մը կամ ուրիշ դիպում մը նսրա-տած է իրենց յաջողութեան. բայց պարագայներու բերմամբ ձեռք բերուած ստակն ապացոյց մը չէ խելքի և ընդու-նակութեան: Մեր վաճառականներու մեծամասնութիւնը զարգացած միտք ունե-ունեցող մարդերէ չէ կազմուած. ասոնք պէտք է որ ճանչնան իրենց մտքի սահ-մանն, և եթէ իրօք կ'ուզեն ազգին ծառայել, պէտք է դիմեն իրենցմէ աւելի խելացիներու անջակցութեան:

Օր մը Նուրեան էֆէնտի կ'ըսէր այս մարդերուն.

— Դուք ստակ ունիք, մենք խելք ունինք. դուք ձեր ստակը տուէք, մեզնէ ալ մեր խելքն ուղեցէք, երկուքը միացնելով լաւ գործ մը կարելի է ընել:

Հիւանդանոցի Հոգաբարձութիւնն եթէ այս խրատին հետեւի, գէշ չընել:

Ինչո՞ւ համար Հիւանդանոցի Հոգաբարձութեան մէջ երբեք բժիշկ չգտնուի:

Անկարելի է ըմբռնել թէ՛ բժիշկ մը վաճառականի մը չափ օգտակար չլինար ըլլալ Հիւանդանոցի վարչութեան մէջ:

Նոր տարերքներ մտցնել Հիւանդանոցի վարչութեան մէջ, Հիւանդանոցի ծիծ' Ու ծիծ' Գլխահին ազգին առջեւ դնել, դատարարել խնայողական դրութիւնը, զի խնայողութիւնը Հիւանդանոցին համար մահ է, ջնջել վարժարանն և եթէ հարկ է ուրիշ մասեր ալ, և մնացածը լաւ պահպանել, ահաւասիկ ինչ որ կարելի է պահանջել:

Աւելորդ չէ որ Հիւանդանոցի խնդիրն Ազգ. Ժողովն իրեն խնդիր ընէ:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԳԵՆ. ՏԵՐ—ԱՍՏԱՌԻՐՈՎ

Ե Ի

ՀԱՅԻ «ԵՍ»Ը

Վիլնէւմ կայսեր այցելութեան առթիւ զօրաց մեծ համախմբում եղաւ Պետեր-բուրգի շուրջերը. ռադմարիորդներ և զօրահանգէսներ կատարուեցան առաջնորդութեամբ նոյն իսկ երկու կայսերց: Եւրոպական թերթերն արդէն հրատարակեցին թէ մօտ 150 հազար զօրաց ռադմական շարժումների և մղած ճակատամարտերի մէջ երկու զօրավարներ են եղած գլխաւոր դերակատարները, մէկը՝ ռուս ֆլդի գեներալ Դանիլիւով, միւսը՝ գեներալ Տէր-Ասատուրով, որի վրայ և շատ գովեստներ կ'անեն եւրոպական թերթերի թղթակիցները, վեր հանելով այս առթիւ և նորա կաւկասեան ծագումը: Մեր անբաղտ ծագումից բաղտաւոր ծագեալների երեւան գալը օտարաց մէջ ո՛րչափ էլ սովորական երեւոյթ եղած լինի միշտ, բայց և այնպէս աւելորդ չ'աւտայ մի քանի կարճ ծանօթութիւններ տալ գեն. Տէր-Ասատուրովի վրայ, յարելով միանգամայն մի երկու գիտողութիւններ մեր ազգային մի տխուր յատկանիշի առթիւ:

Գեն. Դիմիտրի Ասատուրեան Տէր-Ասատուրով բնիկ Թիֆլիսցի է, հայրը վաճառական էր, որ վախճանուած է մի քան

նի տարի տուա՞ծ. մեծ հայրը Թիֆլիսի Մոզնի եկեղեցու քահանան է եղած, որն իր ունեցած ծուխերի մէջ առաքելն է անշահասէր տէրութիւն տնուն է թողած, մի անուն, որին պէտք ունին շատերը մեր հոգեւոր հայրերից. . . Տէր-Ասատու-րովները հինգ եղբայր են, որոնցից մեծը գեներալն է. չորսից երկուսը զինուորական են, մէկը, Մկրտիչը, արդէն չաշտօնէ հրաժարեալ հազարապետ, իսկ միւսը պաշտօնի մէջ. երրորդը՝ բժիշկ, չորրորդը՝ փաճառական, տէր լուցիկների գործարանի, իր ուսման ընթացքը գեներալ Դիմիտրին աւարտած է Պետերբուրգ հեծե-լազօրաց Նիկոլայեւսկի դպրոցի մէջ, որտեղէն ելած է Կարնեւի՝ աստիճանաւ ու մտած կայսերական հուսար թիկնապահաց զնդի մէջ։ Թիկնապահ բոլոր գունդերի մէջ առաջինն է այս գունդը հագուստի չքեղութեան և յարգանաց առաջնաւորութեան կողմից թէ՛ կայսերց և պալատականաց առաջ և թէ՛ ժողովրդի։ Հանգուցեալ Ալեքսանդրը այս գունդի պատուաւոր պետն էր և հանգիստաւոր օրերում նորա համազգեստը կը կրէր միշտ։

1863 թուականին, երբ Մեծ Դուքս Միքայէլը Կովկասի փոխարքայ նշանակուեցաւ, Դիմիտրի Տէր-Ասատուրովը Կապիտանի աստիճանաւ թիկնապահ ընդունուեցաւ և Դուքսի հետ միասին ճամբայ ընկաւ Պետերբուրգից Թիֆլիս։ Չէրքէզտանի մի մասը (Չէչէնստան) դեռ չէր նուաճուած, բայց ամեն միջոց ձեռք էր առնուած փոխարքայի կեանքն ապահովելու նոցա երկրի մօտից անցած ժամանակը։ Ամբողջ Թիֆլիսը ոտի վրայ էր, հայ համքարներն իրանց դրօշակներով և զուռնաներով պատրաստութեան մէջ կայսեր եղբայրն ընդունելու համար. վրաց ազնուականներն ասպետական խայտաճամուկ հագուստներով և կարմիր թաւեայ փաշտեղներով հայապզի հաջակաւոր Դաթիկօ Բեհրուզովի առաջնորդութեամբ Թիֆլիսի շրջականները ձիարշաւի և Ջեբէի վարժութիւններ էին անում։ Երեք օրուան արձակուրդ տուան բոլոր դպրոցապետները. Վարդաշէնի լեռանց ծերպերից մէկ տարի էր որ հանած էին ինձ ու տուած Նիկոլայոս Տէր-Յակոբեանցի գիշերօթիկ դպրոցը. մեծ, այսչափ մեծ քաղաք չէի տես-

սած, ո՛չ այսպիսի շուք, ուստի ամեն տեսածներս վրաս շլացուցիչ տպաւորութիւն կ'անէին. . . Ի՞նչ է հայութիւնն, ի՞նչ է օտարը, գիտակցութիւն չունէի, ուժն էր ու մեծութիւնն որ կ'ազդէր վրաս, սոսկ ընադդարար բաբախել տալով սիրտս, երբ ժողովրդի շուկը խուլ արձագանք կուտար հեռու փողոցներում թէ՛ Դաթիկօ Բեհրուզովը հայ է և վրացի գեղանի կտրիճների պարագլուխը. . . Մէկ էլ տսին թէ փոխարքան կը մօտենայ. քաղաքին ժողովրդեան հոսանքը ծովի ալեաց նման կը մղուէր Վերայի կողմը, ուր կառուցուած էր յաղթական կամարը. թէպէտ ինչպէս երազ, բայց դեռ քաջիս առաջ է ամեն ինչ. քաջիս առաջ է և այն պարթեւան զենեքալը, որն սպիտակ ձիու վրայ փռիի մէջ թաղուած տաք արեւի տակ հեւալով փոխարքայի կառքի առաջ ճամբայ կը բանար ժողովրդեան ստուար պատուարի միջից։ Յաղթական մուտքը կատարուեցաւ, փոխարքան իջեւան հասաւ. եկեղեցեաց զանգակները լռեցին, գիշերուան լուսաւորութիւնը փոխարինեց ցերեկուան հանդէսին. այդ եւս անցաւ. մայրաքաղաքն իր սովորական կերպարանքն առաւ. խանութպանները խանութները բացան, հատակները դեզգեահները. բազմալեզուեան օտոյ կ'ըսէինք սկսուեցան և ահա՛ կապիտան Դիմիտրի Տէր-Ասատուրովը ամենքի խօսակցութեան առարկան։ Ծանր վէրք ստացած նա պառկած է տունը. հայրն և եղբարքը բժիշկների ետեւից են, իսկ մայրը Մոզնու եկեղեցին մոմերով կը լուսավառէ սիրեցեալ զաւակի համար աղօթելով. Փոխարքայի առաջին հոգը նա կը լինի. բժիշկ բժշկի ետեւից խնամելու կ'ուղարկէ և ժամէ ժամ լուր կ'առնէ. երիտասարդ Տէր-Ասատուրովը օրուան դիւցազն է, որովհետեւ կուրծքը չէրքէզների սուրի դէմ դնելով, նա ազատած է փոխարքայի կեանքը, էլբրուսի անհաշտ որդոց երկրից անցնելու ժամանակը։

* *

Կ'անցնի ամիս, երկու, և ահա՛ կապիտան Տէր-Ասատուրովը ի տես ժողովրդի աջ կուան տակ փայտեայ նեցուկ կը կրէ, բայց թուրը մէջքին և Ս. Գեորգի չքա-

նշանը կուրծքին, որն իր ձեռքով է կախած Մեծ Գուռը: Կարծես թէ նորա կողքերն չեն ծակուած չէրքէս խանջաւներով, կարծես թէ նորա կուրծքը և թեւերը չեն կրած խոր խոր վէրքերը, տեսքը կայտառ է, աչքերը բոցավառ, ինչպէս աստարէյ ելած արարական նժոյգի: Հուսարի չքեզ համապէսաբար սեւաչեայ և թուխերես երիտասարդի վրայ խկոյն կը մատնէ նորա ծագումը: Ալէքսանդր Բաբանատովի խանութի մէջ, պալատական փողոցի վրայ, Թիֆլիսցի իր բարեկամներով շրջապատուած բարձր ձայնով և աշխտյ շարժումներով մերթ հայերէն, մերթ վրացերէն մահաւորի պատահարի վրայ կը խօսէ նա այնպէս ուրախ, այնպէս զուարթ, որ կարծես խնջոյքի կամ հարսանիքի հարազրու թիւն է անում:

* *

Կ'անցնին տարիներ. ամեն մարդ իր հոգեբով կ'զբաղուի. ընկերներին հետ գլխնադիայից վերադառնալիս կը պատահի երբեմն տեսնել փողոցը Տէր-Ասատուրովը, բայց էլ առանց մտնաւոր ուշադրութեան առարկայ տնելու նորան և զարմանալի է «մարդ» ասուած արարածը, ո'ր ազգի, ո'ր ցեղի էլ նա պատկանի. այս օրուայ դիւցազը վազուան «հասարակ մէկը» կը դառնայ... Չգիտեմ քանի տարի կ'անցնի, որ մէկ օր անցած ժամանակը ակամայ ետեւէն կը նայիմ, զարմանալով թէ՛ ի՛նչ շուտ գնդապետ եղաւ նա, դեռ մազերը սաթի նման սեւ, դեռ գլխարկը գլխի վրայ ծուռ, ինչպէս վայել է այդ կովկասեան տաքարիւն կտրիճներին: Կ'անցնի ժամանակ եւս, երբ Արէսին որդեգրուած կը վերադառնամ Պետերբուրգից և վերջին պատերազմի դերակատարաց խմբի մէջ դէսուէքէն կ'ոչդարկվեմ: Լազարեմ, Տէր-Ղուկասով ու Շօլիովիկով կը տեսնեմ ամեն օր, մէկը մէկից տեսուք, մէկը մէկից անուանի. էլ ո՞վ է մտաբերողը թէ էլ ո՞ւր մնաց Տէր-Ասատուրովը: Մէկ օր Լազարեմի մօտ էի, որ ներս մտաւ մի գէնեհալ ու խաղաղատանօք ծերունի դիւցազնի գլխը նետուեցաւ. ո՞վ տեսնեմ. զնդապետ Տէր-Ասատուրովը, մազերի մէջ ձերմակները ցանցառ սպրդած: Լազարեմը ներկայացուց

մեզ միմեանց. նորա համար ի հարկէ ես անձանօթ մէկն էի, խի նա վաղածանօթ Հուսար կապիտանը, բայց, ո՛ հայի աւանդական գոռոզութիւն, երբ դիմացինը հայ է, այլ ո՛չ օտար. հազիւ երկու ատիճան ստացած մի լակոտ այնպիսի խրոխտ ձեւեմ տուած, որ կարծես թէ նորան հաւատար մէկը լինեմ. ինչո՞ւ, որովհետեւ սպարապետը հայ է և երկուստ էլ հայ: Ի՛նչ և իցէ. Տէր-Ասատուրովը սկսեց հաշիւ տալ զօրաբանակի հրամատարին ապստամբ լեզգիներին զսպելու համար ձեռք առած միջոցների վրայ. լսելով վերջին պատերազմի դէպքերը, Շամիլի հայրենակիցները Ալթարի, Թաբատարանի և Ղազիլումուխի նահանգաց մէջ պատրաստուած են եղել, կովկասի ամբողջ ժողովրդոց և ռուս զօրաց մեծ վտանգ սպառնալով: Գեն. Տէր-Ասատուրովը է ուղարկուած եղել այդ կատաղի լեռնականները զսպելու համար և նա իր ըստանձնած գործը մեծ յաջողութեամբ, և որ գլխաւորն է՝ գրեթէ առանց արիւնահեղութեան ի կատար ածելով, եկած է Թիֆլիս փոխարքային և Լազարեմին անձամբ հաշիւ տալու և նոր հրահանգներ առնելու:

Այդ օրէն առիթ ունեցայ անձնական մի գործի համար տեսնուիլ Տէր-Ասատուրովի հետ մի քանի անգամ, որով կարողացայ ի մօտոյ ճանաչել նորան. մանաւանդ այն տեսակէտով, որով կարող էր նայիլ հայ հրապարակախօսութեան մէջ մտած մի երկտասարդ, բաւական intransigent: Եկաւ նա Մշ-ի խմբագրատուն. բանաստեղծի մը քերթուածները կը կարդայինք երբեմն, որի մեծ հիացող էր, բանաստեղծի էլ խիտ մոտերիմ բարեկամը:

* *

Պարագաների բերմունքները նորէն փոխուելով ինձ համար, գնացի Պետերբուրգ, եկայ Պոլիս մինչև կոկորդ գրչի և թղթի զրազմանց մէջ խրուելով. մուշուկեցան հինները, մանաւանդ նոքա, որոնք որոշ ասպարէզի վրայ օրոշ պարտաւորութիւններ ունենալով իրանց գործերով են միայն զբաղուած... կովկասէն եկող զնացողներէն երբեմն հարցումս դրձ անելով, խմացայ մի անգամ թէ գէնեհալ

Տէր-Ասատուրովը արդէն գեներալ լէյտենանտ է և հրամանատար հեծելազոր զօրաբաժնի Կովկասում, առաջնական պէս միշտ աշխոյժ, միշտ զուարճասէր և մասնաորապէս սիրող Հայոց թատրոնական ներկայացումներին, անդամ Թիֆլիսի Հայոց Բարեգործական Բնակրութեան և լինելու ուրիշ անգամ էլ լինելի թէ ինչպիսի Գոնգուէրովի հետ ձգտեալ յարմարութեանց մէջ լինելով, ունեցած պաշտօնը փոխած է Կովկասէն հեռու Աստորիական սահմանադրւոյ մօտ, մնալով միշտ առանձին զօրաբաժնի գլխաւոր:

Դպրանոց յետ ահա՛ վերջին լուրերը նորա մասին Կուսան եւրոպական լէւրթերի թղթակիցները, մեծ գարնանը յայտնելով թէ՛ ի՞նչպէս կը լինի որ վերջին կայսեր պէս մի ազգապէս Կուսայ յատկապէս ուսուցչական կը լինէր և այդ բանակի ուսուցչութեանը ըստ արժանոյն վարելու համար, Ալեքսանդր կոնյորը ամբողջ Ռուսիոյ մէջ միայն մէկ ոչ-ուսուցչական կ'ընտրէր, տասնեակ հազար ամենալաւիկ հեծեալ զօնաւորը առաջնորդելու համար, իր Օգոստոսիան հիւրը հաւանեցնելու փառաբանով: Յիրաւի, չա՛տ դարմանալու բան է սա, երբ ուշադրութեան առնենք թէ Տէր-Ասատուրովի նման գեներալ-լէյտենանտներ հարկւրներով կան Ռուսիոյ մէջ, եթէ չ'տեսնէ հազարով: Սորա բացատրութիւնը կարող է տալ միայն այն ծագումը, որի մէջ կարելի է դնել ընդունակութեանց ամենամեծ պաշարներ, հերիք է որ Հայը դուրս ելնէ իր շրջանէն ու իր ոյժերը նուիրէ ո՛ր և է օտար տէրութեան ծառայութեանը:

Հապարաւոր օրինակներով ապացուցուած այս իրողութիւնը տեսնելով, արդեօք ներքին չէ՞ գէթ մի անգամ էլ հարցնել թէ՛ երբ օտարաց մէջ հաջակ ստացող մեր ազգի բարձր անձնաւորութիւններով այնչափ կը փառաւորուինք մենք, արդեօք ազգային գործունէութեան ինքզինքները նուիրած մարդկանց մէջ չկա՞ն բնու մեծ անձնաւորութիւններ, որոնցով կարող լինէինք նոյնչափ պարծենալ, ո՛րչափ մի Այվադովսկիով, մի պրօֆէսոր Արծրունիով, մի Տէր-Ասատուրովով, մի պրօֆ. Էմինով, մի պրօֆ. Պատկանեանով և այլն և այլն, որոնք ամենքն էլ եթէ

«մեծ անձնաւորութեանց» հաջակ են ստացած մեր մէջ, նորա համար են ստացած որ նոցա քաջալերողները, նոցա փառաւորները նախ օտարներն են եղած: Ի՞նչ է այս ախուր երեւոյթի, այս խղճալի իրողութեան պատճառը, որն այնչափ արդէն է մեր յառաջագիտութեան, մեր զարգացման և գիտակցութեան:

— ՀԱՅԻ ԶԶՈՒՆԵԼԻ ԵՍԸ:

Երբ Հայը Հայոց մէջ կը գործէ և Հայի կարծիքէն ու քաջալերութենէն կախեալ կը լինի, եւն է կ'առաջնորդէ ամենքը: Այս ինչը նշանաւոր ճարտասան է, միթէնա էլ ինձ նման Հայ չէ՞. ինչո՞ւ նորան ծախահարկէն, այլ ո՛չ ինչ, իմ եւս. այն ինչը հրապարակաօտարական մեծ ձրքեր և կոչում ունէ, ինչո՞ւ նա դեր խաղայ ժողովրդի մէջ, այլ ո՛չ եւ. մի ուրիշը 40 տարի ազգի պատմութիւնն է ուսումնասիրել, ինչո՞ւ նորա հեղինակութիւնը ճանաչուի, այլ ոչ եւ. մի այլը ժողովուրդը առաջնորդելու քաղաքագիտական մեծ տաղանդ և փորձառութիւն ունէ, ինչո՞ւ նա առաջնորդէ, այլ ո՛չ եւ. եւ, եւ և եւ, ահա՛ Հայի ժառագական ախար, նորա ներսը կրծող սրդը, որից երբէք նա չի ազատուել և ազատուելիք էլ յաւիտեան չունէ:

Դորա համար է որ Պետրոս Շաշեանցի և Ստեփան Ոսկանեանների նման մեծ ուժեր ասպարէզից քաշուելով, կամ անգործութեան մէջ ժամանակ կ'անցնեն կամ օտարի շահերին ծառայելով. դորա համար է, որ Մարկոս Աղաբէկեանի, Մատաթիայ Գարաբաշի, Կարապետ Փանոսեանի նման ուժեր, ամեն մէկը իր տեսակի մէջ, անտարբերութեան դատապարտուած օրուայ ապրուստի վրայ միայն կը մտածեն, շատ անգամ այդ եւս դժուարաւոյժ խնդիր ունենալով. այդ է պատճառը որ Միսաքեանի նման մարդիկ Դիոգինէսի ճամբուն կը բռնեն. ո՞վ է նոցա վրայ մտածողը, ո՞վ է նոցա յարգը և կարգը ճանաչողը. և ո՛չ իսկ նոքա, որոնք ասպարէզ են եկած, քիչ թէ շատ դիրք են կազմած շնորհիւ նոյն իսկ այդպիսիների, որոնց մինչդեռ մոռանալով, ընկած տեղը միայն իրանց եւր առաջ կը քշեն, իրանց անունը

միայն փառաբանել կ'աշխատին: Ո՞ւր պիտի երթայ այս եւի վերջը, ո՞ր անդունդը պիտի արդեօք տանէ նա մեզ: — Աստուած գիտէ:

Մինչդեռ այդ եւր կը լուէ, կ'ստորանայ, ճճիի նման ոտի տակ կը սողոսկի, երբ հայի մէկը օտարաց մէջ կը յառաջանայ. այն ժամանակ էլ եւի տեղ չկայ, որովհետեւ օտարը մի ուժ է, որի առաջ նա պիտի վայրաքարչ ստրուկ դառնայ, սիրով քծնի, ի սրտէ փառաբանէ մինչեւ այն օրը, երբ դիցուք մի լազարեւ, մի Տէր-Ղուկասով կամ մի Այվազովսկի օտարը թողնելով ուզէին իրանց ուժերը իրանց ազգի շահերին նուիրելու. մէկ էլ տեսար նոյն լուռ ու մունջ ստրուկները մէկ մէկ

առիւծ դարձան, մէկ մէկ ամենիմաստ փրկափայ կտրուեցան ու մէկ հաւասար դժի վրայ կանգնելով նոցա հետ (կարելի է դեռ չա'տ աւելի) սկսեցին արհամարանքով քննադատել, ասելով. «նա ո՞վ է որ այսչափ յարգանքներ է վայելում, եւ նորանից ինչո՞վ պակաս մարդ եմ?»

Ահա՛ հայի պատկերը, սիրելի ընթերցող, այս պատկերը ունենք եւ՛ ես, եւ՛ դու, եւ՛ ամենքը, ուստի մեր արժէքը ճանաչենք ու այնպէս յոյս դնենք ո՞ր է մագաղայի վրայ: Դառն է, բայց կարծեմ որ ճշմարիտ է:

ԳՐԻԳՈՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

22 Օգոստոս, Պերս

ԿԱՊՈՅՏ ԱՂՋԻԿԸ

Սուգէն ելած էր նոր, կապոյտ կը հագնէր.
Երկնից գոյնին նման գըլխարկ մ'ալ սիրուն
Իր օգային ծալքերուն մէջ կ'ամրոփէր
Նուրբ գանգուրներն անոր ոսկի մագերուն:

Միշտ լուսեղէն ծիծաղ մ'ունէր իր բերան
Հընչուն, անոյշ, երգի մը պէս սիրարձարծ,
Եւ խրոսովիչ նայուածքին մէջ անոր լայն
Ծովն իրեն գոյն, երկինք իր շողն էր դըրած:

Սիրած չէր դեռ, ո՛հ, զայն կ'ըսէր իր ճակատ,
Չըքնաղ երազ մ'էր լոկ իր կեանքն ըստխտակ,
Տեսիլք մ'անծիր, ուր այդ հոգին խանդակաթ
Կ'օրէր տարտամ ըզձից անչէջ բոցին տակ:

Բընութեան մէջ ծովն էր իր իղձն առանձին,
Դաշտին ծաղկանց, երգոց համար չունէր սէր,
Ամեն առտու կարմիր արեւն այգածին՝
Իր մակուկովն արեաց մէջ զայն կ'ողջունէր:

Չը գիտէինք, պըչրա՞նք էր թէ սարգ ճաշակ,
Այդ մակոյկն ալ կահեալ գոյնէն միշտ ծովուն,
Կապոյտ աղէկ կ'անուանէինք զայն մինակ
Երբ կը նազէր հոն իր գեղով փողփողուն:

Չէր որսար ան, կոհակաց հետ կը խաղար,
Անհունին մէջ ճեմելով սէգ ու անհոգ,
Կ'ուզէր բաժնել աստղերուն հետ անդադար
Այն գաղտնիքներ, զոր ծովն երկնից կուտայ լոկ:

Հողմոյն, ալւոյն, վըհին ալ հետ բարեկամ՝

Յորձանքներէն , ամպէն , շանթէն չունէր վախ ,
Այդ անկայուն տարերց մէջ տեղ չատ անգամ
Կռուած . յաղթած էր փոթորկին այբբախ :

Գիշեր մ'իրեն նաւ մը փոքրիկ մօտեցաւ
Սուր ճեղքելով ծալ ծալ ծովանքն ընդարձակ ,
Ոյր բարձերուն վրայ գեղով մը անրաւ
Վէս ճակատ մը կը նկարուէր համարձակ :

Լուսինն տըժգոյն ցոլքերուն տակ նըւազկոտ
Սեւ ու ծաւի աչք իրարու յառեցան ,
Եւ սիւքն անոյշ անոնց չընչոյն վանկն աղօտ
Սիրոյ բառով մը կը կրկնէր բարձրաձայն :

Խոթուեցաւ խնայն ծովուն ջինջ երես ,
Մըրրիկ մ'եւաւ , մարեց երկնից լոյսն ու բոց ,
Լեռներու պէս վեր բարձրացան փըրփրադէզ
Կոհակներու անսանձ ամպերն հողմակոծ :

Ալ հորիզոն չըկար , քառս մ'էր եթեր ,
Ճիւղներու հանդէս մը սեւ ու խաւար ,
Ուր փաթթուած իրարու հոգի ու ամպեր
Խուլ կոծերով կը գոռային անդադար :

Նախանձոտ ծոփն յանկարծ բացաւ իր թեւեր
Գըրկեց խառն արջի նաւաւ հեշտագին ,
Անոր կեանքին հետ հրապոյրներն ալ ու սէր
Չուգեց թողուլ կըրից ահեղ վրտանգին :

Ս Ի Պ Ի Լ

ԵՐԶԱՆԿՈՒԹԵԱՆ ՍԵՄԱՐՅԸ

Ս.Ո. Պ. Ա.Պ.ԱՄԵԱՆ

Չգիտեմ ինչու այն գիշերը մահու չափ
տրտում էր հոգիս . դառն մտածումներ
կը թռչտէին գանկիս աղջամուղջին մէջ
ինչպէս սեւ չղջիկներ անդունդի մը ա-
լուցը մէջ . անհուն յոգնութիւն մը ամ-
բողջ էութիւնս կը ընուր . և կեանքի բեռը
կը ծանրանար ուսերուս վրայ . կ'զգայի
կուրծքիս մէջ ձանձրոյթի իժն . որ իւր
ցուրտ օղակներուն մէջ սիրտս կը պարու-
րէր ու կը ճնկէր . Ու մինակ , լքեալ ,
վհատ , կ'երթայի անծանօթ ձամբէ մը որ
լուռ էր գերեզմանի մը նման և յուսա-
խաբ սրտի մը պէս ամայի . Ուսկից մտած
էի այդ ձամբան և ո՞ւր այդպէս կ'եր-
թայի , չէի գիտեր . անգիմադրելի բնագ-
իւր մը վրիս կը մղէր , և առանց ետեւս
կամ շուրջս նայելու , կը քայլէի , միշտ կը
քայլէի :

Երբ աչքս վեր նուր , անծայրածիր ծո-
վու մը առջեւ գտայ զիս . և տեսայ տն-
հուն անտառն ալիքներուն ոյց լուսնագոծ
կոտորք կը պարէին ի սոյլ ամառային
հողմոյն . Ետեւս նայեցայ . երկայն թա-
փուր այն ուղին ուսկից եկած էի անհետ
էր եղած , և հսկայ ծառերու աչագին
խուժան մը կը կանգնէր անդ , թանձր ու
մուսլ :

Նստայ հոն , խոշոր քարի մը վրայ , և
հրդեհեալ ճակատս ձեռքիս վրայ յենլով
մտածել սկսայ . Սքանչելի գիշեր մըն էր
ամառուան . անամպ երկնքին մէջ որ կը
տարածուէր լուսաւոր բիւր աչքերով զար-
դարուն անսահման սիրամարգի տոտնի
մը նման , լուսնին ճաղատ գանկը կը թա-
ւալէր , լոյսով ծեփած իւր տափակ այտերն
ու ճակատը , և ճառագայթից այն անձ-
րեւն որ կը հոսէր երկնքէն՝ ծովը կը
բռնկցնէր . զուարթ հով մը երգելով կ'ար-
շաւէր հեղուկ ասպարէզին վրայ , և իր
թեթեւ քայլերն ափսոսներ կը պեղէին հոն

ու կը հանէին փրփուրներ որք ոսկի մագերուս պէս ալեաց վրայ կը ծածանէին:

Եւ կը խորհէի բոլոր այն դառնութեանց ու տառապանաց վրայ որք մեր կեանքը կը ընուն և այն ահեղ յուսախաբութեանց վրայ որք մեր էութիւնը կը խորտակեն. կը տեսնէի այս աշխարհն, այս գարշելի կաւի գանգուածն որուն վրայ կը սողան չուսուսակա՛ն, նոգովեա՛լ էակներ. կը տեսնէի մեր բոլոր յոյսերուն, մեր բոլոր փառամանց ու զգացմանց ողբալի յիմարութիւնը, կը տեսնէի մեր անգուսպ իզներն որք կ'երթան բազմաթիւ անոյոք ճակատագրին դէմ և հալիլ ինչպէս ձիւնի հատիկներ հրակէզ երկաթէ պատի մը վրայ, և յիշատակներու լալագին երամին մէջէն որ սեւ մեղմնեօրէն պէս գլխուս շուրջը կուգային բղբալ, և շողացած անուրջներու, խարուած բաղձանքներու, ջախջախուած յոյսերու աւերակներուն մէջէն, կը տեսնէի կոշտ իրականութիւնն, որ իւր ազեղ մերկութեան մէջ կը անկուէր իմ առջևս իր ցուրտ քրքիջը ճակատի թքներով: Կը տեսնէի որ բոլոր այս անկայուն, ցնցող, խուսափող բաներուն մէջ որ մեր կեանքին իսկութիւնը կը կազմեն, բա՛ն մը կար միայն որ անխախտ կը կենար, սոսկալի կերպով ճշմարիտ և ապահով, և այս գերեզմա՛նն էր, այն անգութ պոռնիկն որուն սեւ թեւերուն մէջ մարդկութիւնը կ'երթայ քնանալ:

Ո՛ր պէտք էր ուրեմն փնտռել ինչ որ «Երջանկութիւն» կոչեցին մեր հայրերն, օգային ուրուական որուն ետեւէն կը վագենք յաւիտեան և մարդկային ընկերութեա՞ն մէջ, բայց ուրիշ բան չենք գտներ հոն եթէ ոչ զզուելի ետականութիւնն որ մարդուն նկարագրին հիմը կը կազմէ. գրքերո՛ւ մէջ, բայց հոն է մանաւանդ որ ցաւալի կերպով յերեւան կ'ելնէ մարդուն դանկին անսահման դատարկութիւնը. բնութեա՞ն մէջ, օ՛հ, շատ անգութ կը գտնենք զայն և շատ անկարեկիր, այդ մեծապայծառ ու բիւրադաշնակ չքերութիւնն որ յաւիտենական տօնի մը պէս կը շողայ և կը ժպտի մեր վշտերուն ու տուայտանաց թանձր մթութեանը վրայ:

Ու խորին անձկութիւն մը երկաթէ ցանցի մը պէս հնգիս կը պաշարէր. կը նայէի ծովուն որ կը տառանջը խռովեալ

հսկայ լանջի մը նման և իւր լուսեղէն ծիրանւոյն տակ դալարելով կ'երթար հեռուն հորիզոնին վրայ իր անհուն շրթամբ երկինքն համբուրել. և բուռն տենչ մը կ'զգայի նետուելու այդ ցուրտ վիրապին խորը, և անոր խորութեանց մէջ թաղելու առ յաւիտ յոյսերս, անուրջներս, տառապանքս, ամբողջ էութիւնս... Եւ կը կրկնէի անհնարին տրտմութեամբ: «Ո՞վ պիտի տայ ինձ երջանկութիւնը...»

«Եկո՛ւր... եկո՛ւր... եկո՛ւր...»

Ի՛նչ... Ձայն մը... ո՛ւսկից կուգար այն, երկնքէ՛ն, ծովէ՛ն թէ հողույս խորերէն, այդ ձայնն որ աւելի քաղցր էր քան աշխան ամենէն տխուր վերջալոյսն ու քան երկնից ճակտուն վրայ պաղպաղող ամենէն ջինջ յակինթն, աւելի քաղցր քան մօր մը նայուածքն և սիրուհոյ մը առաջին համբոյրն... Ուսկից կուգար այդ ձայնն, և ո՞վ էր որ կուգար արթնցնել զիս այն մահարեք թմրութեան մէջ զոր տրտմութիւնն հողույս վրայ կը ցօղէր:

«Եկո՛ւր... եկո՛ւր... եկո՛ւր...»

Վեր առի գլուխս Դիմացս, քանի մը քայլ հեռու, ալեակի մը կատարին վրայ կանգուն, կին մը կը ժպտէր ինձ: Դիւթական էակ մըն էր այն, հանգոյն անոնց զորս երազոց մէջ կ'ընդհմարենք. երկայն մաքուր ծալքերով սպիտակ շղարշ մը կը ծածկէր նորա կաթնաթոյր մարմինն որուն անթերի շրջագիծները ծովուն ոսկի յատակին վրայ յատակօրէն կը նկարուէին. իր բազուկները, կարապի ուլան պէս ճերմակ ու ձկուն, ծալուած էին իր՝ կուրծքին վրայ. իր ձիւնափայլ վզին փափուկ պտուտանդանին վրայ կը կանգնէր հրաշալի գլուխ մը որ յունական արձաններու աննման կատարելութեան կը միացնէր դերաշխարհային անբացատրելի հրապոյր մը. իր ճակտէն ու քունքերէն մազերու թանձր ու սեւ կոհակը կը թափէր վշտ ի վշտ ողորդ ու սիրուն ամբիծ սպիտակութեան վրայ:

«Ո՞վ ես դու, ըսի անզգալաբար ի ծունր իյնալով, որ կուգաս ժպտիլ իմ վշտերուն, ո՞վ ես դու...»

«Եկո՛ւր, հէք տղայ. որ կ

ծես, եկուր հանգչեցնել յոգնած ճակատդ իմ գրկիս վրայ, ու զքեզ տանիմ այն աշխարհն ուր հոգիդ պիտի թօթափէ իր մթութիւնը:

«Եկո՛ւր, ես մեծ Միսիթարին եմ. քու նախահարքդ ճանչցան զիս, և անոնք որ հաճոյք գտան արտասուաց մէջ, անոնք որ ձեր աշխարհին վրայ ստուերներու պէս թափառեցան, լւին, խոհուն, մեղամաղձոտ, այդ մեծ երազողներն որ խուժանէին յիմարներ համարուեցան, անոնք ամենքն ալ եկան իմ գրկիս քնանալ: Եկո՛ւր, տանիմ այն աշխարհն ուր հոգիդ պիտի թօթափէ իր մթութիւնը:

«Եկո՛ւր, իմ պետութիւնս գիշերին ստուերաց մէջ է հաստատուած. և լուսնին շողերուն տակ կը սիրեմ. ես երեւիլ երբ սպիտակ թեւերը բացած երկինքն ի վեր Տիւր փախչի, և գիշերին անհուն սարսուռն երբ սաւառնի ովկէանին միանանց վրայ, երբ վերին կամարը պիտակուի լոյսաշքերով և երկրի վրայ աղջամղից աճերուն երբ սկսի փեղալ. յայնժամ կ'ելեմ իմ պալատէս և լուսնին շողերէն մին ինձ ճամբայ ընտրելով կը սահիմ կ'իջնեմ յերկիր անտիկու համար թշուառները: Եկո՛ւր, տանիմ զքեզ այն աշխարհն ուր հոգիդ պիտի թօթափէ իր մթութիւնը:

«Եկո՛ւր, ես եմ որ արեգերաց վրայ երկնեանք զգարչ մը կը սիրեմ. և ես գոյն, ես բոյր, ես դաշնակութիւն կոչուած ամեն բանի որու հպիմ, և ես եմ որ խորհրդով կը պատեմ աստղերուն թըրթուացող լոյսն ու լուսնին ոսկի նշխարքը. ես եմ որ ծովուն թուրս կռակին վրայ կը ցօլեմ այն ահեղ հրմալոյրն որ մեծ հոգիները կը ցնցէ, ես եմ որ ընդ աղօտ կը ճաճանչեմ փեռեկոտեալ ամպերուն ծոցէն, երբ վերջապէս արեւմտից մէջ հրեղէն արցունք կը թափէ, կամ երբ ալ գը լոյս ու ժպիտ կ'անձրեւէ արեւելից դռներէն: Եկո՛ւր, և ըսէ ինչ որ կը կամիս, քեզ վայրկեանի մը աստուածութիւն կարող եմ տալ, կրնամ զքեզ երկրի ընդերաց մէջ տանիլ պտտցնել կամ ծովուն ալուցը մէջ ընկլուզել. կրնամ զքեզ աստղէ աստղ առաջնորդել և երկնից ծաւի անդունդին մէջ խորասուզել. բայց եկուր մանաւանդ տանիմ զքեզ այն աշխարհն ուր հոգիդ պիտի թօթափէ իր մթութիւնը:

«Եկո՛ւր, ես եմ որ կը կախուիմ քերթողին ուսին վրայ երբ գերաշխարհային իր ճախրանաց մէջ երկնից աստղերուն հետ նա կը նստի. ես անոր վերքերն յուշիկ յուշիկ կը փայփայեմ ու քնացնելով իր վշտերուն ճայնը, իր աչքէն կը սքօղեմ իրականութիւնն և իր դառնութիւնն, ու կը բանամ իր հոգւոյն առջեւ ոսկի դռներն այն աշխարհին ոյր շլացուցիչ, զգլխիչ հեշտանաց մէջ կը պտտցնեմ զինքը, մինչեւ որ գայ արեւուն լոյսն փրցնել գիշերային ճախրանաց վաղանցուկ թեւերն ու նետել զայն վերադին իր փըլ-փըլկած խուցին մէջ ուր բռնած է թըշուառութիւնն: Եկո՛ւր, տանիմ զքեզ այն աշխարհն ուր հոգիդ պիտի թօթափէ իր մթութիւնը:

«Եկո՛ւր, շատերը փնտռեցին երջանկութիւնն որուն դուն ալ ծարաւի ես. ոմանք գանձուց և այլք հեշտութեանց մէջ կարծեցին զայն գտնել. եզան որ մատենից մէջ ևսյլք որ բնութեան ծայր յուսացին տեսնել զայն. մին գեղեցկութեան, ուրիշ մը մոլութեան, երրորդ մը սիրոյ և չորրորդ մը կրօնի խտուրթեանց մէջ ջանաց զայն փնտռել, և եզան որ նոյն իսկ մահուան մէջ փնտռեցին զայն. բայց անոնք ամենքն ալ խարուեցան. երջանկութիւնը, գերազոյն ու ճշմարիտ երջանկութիւնը, իմ եթերային պալատիս, իմ յաւիտենական պետութեանս մէջ միայն կրնային գտնել. զի գանձերը կոշտ հաճոյք մը միայն կրնան տալ. հեշտութիւնը աստապանքն է որ ժպտուն գիմակով մը այտերը ծածկած էր. մատենք ձեր ուղեղը կը փտեցնեն ու ձեր ճակատագրին անսահման դառնութիւնը ձեզ անքօղ կը ցուցնեն. բնութիւնն՝ անհոգ ու պայծառ՝ կը ճգմէ, կը կլլէ, կը փշրէ զձեզ իր վիթխարի զօրութեան տակ և ձեր հեծեծանաց վրայ ջաւէտ կը ծիծաղի. գեղեցկութիւնն աւելի շատ կ'անցնի քան գարնան աղուր առաւօտներն, և մոլութիւնն այն ծաղկաւէտ անդունդն է որուն մէջ օձերն ու վիշապները կը սողան. սէրը բաւ մըն է որ իր նշանակութիւնը կորուսած է և որ մին է մարդկութիւնը խաբող չրջովիկ հուրերէն, և թշուառութեանէն աւելի դառն է այն երջանկութիւնը զոր կուտան կրօնքն և մահը: Ե-

կո՛ւր, դու որ աղաչաւոր թեւերդ կը գալարես երջանկութեան նոտներին ետեւէն: Եկո՛ւր, հէք սղայ որ կ'արաւառուես, եկո՛ւր, ես կրնամ տիօփել զքեզ: Եկո՛ւր հանգչեցնել յոգնած ճակատդ իմ գրկիս վրայ, ու զքեզ տանիմ այն աշխարհն ուր հոգիդ պիտի թօթափէ իր մթնութիւնը:»

Լուեց, և իր թեւերը բանալով կը կոչէր զիս ձեռքերովն, և իր նայուածքը կը խեղայեղէր, կը գինովցնէր զիս: Իր նրբահիւս շղարչէն և իր սեւ մազերնուն հիւսքերէն երկնային բոյրեր կը հոսէին որք կը գգլէին զիս: Իր ամբողջ մարմնէն կ'ելնէր հոսանք մը որ անդիմադրելի զօրութեամբ մը զիս դէպի նա կը քաշէր կը տանէր:

Ուրք ելայ դողալով, ու նետուեցայ այն գրկին մէջ զոր ինձ բացած էր ժըպտելով: զգացում, մտածում, հպ, վիշտ, յոյս, պատրանք, ամեն ինչ թափեցաւ, հեռացաւ ինձմէ ինչպէս մառախուղն որ կը հալի արեւուն ճաճանչից տակ, երբ հպումս զգացի այդ գերերկրային մարմնոյն: Կը թուէր ինձ թէ սիրտս կուրծքիս մէջ կը շիջանէր, կը մեռնէր, թէ հոգւոյս վրայէն ժանգ մը կը թօթափէր կ'լցնար, կը թուէր ինձ թէ ամպերու մէջ կը փաթթէին զիս, թէ ալիքներու տակ կը թաղէին զիս, թէ խռնիւք, անուշահոտ իւղեր կը կաթէին վրաս ու կ'օծէին զիս: Կը թուէր ինձ թէ ուսոցս վրայ թեւեր կը բուսնէին, և ինքզինքս կորսնցուցած, բազուկներովս փարեցայ այն մարմնաբէ պարանոցին, և «թռչի՛նք» ըսի գիցուհւոյն:

Ժպտեցաւ նա, ու վեր նայեցաւ: Երկար ժամանակ որ իր կռնակէն երկու սպիտակ թեւեր կը պարզուէին, այնչափ լոյն որ առագաստներու պէս հովէն կ'ուռէին և այնչափ նուրբ որ անոնց մէջէն կը տեսնէի լուսինն ու ալիքները: Եւ սկսան ճօճիլ այդ շուշանափայլ թեւերն ոյք սպիտակ ստուեր մը կը ձգէին վրաս, և սկզբանք վերանալ, աւելի թեթեւ քան փետուրն, աւելի արագ քան փայլակն, ետիս դարձուցի աչքերս, և տեսայ որ ցամաքն, ափունքն, անտառն, ամեն ինչ ազօտ մառախուղի մը պէս կը շոգիանար, կը մթնար, կը ցնդէր: Ծովը միայն կը նշմարէի, անսահման բիւրեղեայ սկաւառակն, անծայրածիր անապատն ջուրց, որ

կը տարածուէր, անշարժ և ողորկ: ու կը թռչէինք, կը թռչէինք, կը թռչէինք, և կը մխրճէինք եւս քան զեւս երկնից անվերջ-խորութեանց մէջ: Տեսայ յանկարծ որ աստղերը կը մօտենային, իրենց սկիւ աչքերէն լոյս ժպիտներ հեղլով մեր վրայ: Բայց արծուէնման այդ բուռն ճախրանքը կ'ընդարմացնէր զիս ու կ'ընկճէր, և անպատում հեշտութեան մը ալիքներուն մէջ մինչ կ'որորուէր իմ հոգիս, հանգչեցուցի պարտասեալ գլուխս անծանօթ Դիցուհւոյն ուսին վրայ և փակեցի աչքերս...:

Երբ սթափեցայ, տեսայ որ կանգ առած էինք անհուն պալատի մը առջեւ ուրու ոսկեղէն դռները մեզ կը բացուէին: «Ո՛ւր ենք» ըսի երկնային Առաջնորդուհւոյս: «Անհունութիւնը ճեղքեցինք, ըսաւ նա, անցանք աստղերու, արեւներու անտառին մէջէն», ծիր կաթինին լուսեղէն հոսանքին մէջէն լողացինք և աւելի վեր ճախրելով եկանք հասանք այս անմատոյց բարձրութեանց վրայ ուր կառուցուած է պալատս: Կը տեսնես այս չէնքն որու դռները կը բացուին մեր առջեւ, հոս է որ պիտի գտնես երջանկութիւնն:»

Ձեան պէս սպիտակ ու բիւրեղի պէս թափանցիկ էին որմունքն այդ եթերային պալատին, որու հիմունքն օդոց երերուն հիւլէներուն վրայ էին հաստատուած, և տեսայ անհուն պայծառութիւն մը որ ներսը կը ճառագայթէր:

Մտանք... օ՛հ, ինչ որ տեսայ այն տեսն այդ հրաշալիաց վայրին մէջ, յաւիտեան պիտի չմոռնամ, բայց և յաւիտեան պիտի չհրնամ զայն նկարագրել ձեռքի: Մարմինս կորուսած էր իր բեռը, կը թափէի աւելի քան կը քաշէի այն փայլուն և ողորկ յատակին վրայ որ կակուղ էր աղուամաղէ անկողնի մը նման ու սառիլ մեծ հատուածի մը պէս սպիտակ: Չորս կողմն կը նայէի, շուարած, և այդ անարատ ճերմակութեան վրայ լուսեղէն մանուածապատ գծեր և գոյնզգոյն թըրթռացող աստղեր բիրաճեւ պատկերներ, փունջեր, պսակներ կը յօրինէին: Վերն, անսահման խորութեամբ, ընդարձակ զըմբէթ մը կը բացուէր, որու կեդրոնը բոցաճաճանչ արեգակ մը կը շողար և որու

վրայ ցանուած էին ըլւր ըլւր աստղեր, կարմիր, կանաչ, կապոյտ, դեղին ու բոլորովին ինձ անծանօթ ուրիշ անթիւ գոյներով:

Անծայրած իր էր պալատը. մէջէ մէջ անհամար կամարներ կը բացուէին ու կ'երթային հեռուն կորսուիլ անչափելի խորութեան մը մէջ. այդ կամարներն երկներանգ ու նրբահիւս ծիածաններ էին, ամենքն ալ տարբեր փայլով, տարբեր գոյնով ու ձեւերով, և կը յենուին ծածեւ ոսկի սիւներու վրայ որք գալարուելով կ'իջնէին դէպի գետին և որոնց վրայ ամենէն խոշոր և ամէնէն փափուկն յաւկինթները, կարկէհանները, գմբուխտները, շափիւկայները կը շողային իրենց լուսեղէն ակնարկներն ամեն կողմ արձակելով:

Կը յառաջանայինք այդ շողերու անձրեւին տակ. կը նշմարէի անթիւ հոյեր փոքր ու սպիտակ էակներու որ կը թռչնէին, թեթեւ ու ժպտուն, կամարներուն տակ, գմբէթին մէջ, սիւներուն մօտ, ամեն տեղ, և որք վարդի թերթերու պէս կարմիր ու հոտաւէտ թեւեր ունէին: Երբ օդը ճեղքելով կը սուրային այդ հրեշտակիկներն, իրենց թեւոց չփուռն ազօտ ներդաշնակութիւն մը յառաջ կը բերէր, հանգույն յանրջի խուած անդաշտարհեան ձայներուն կամ ինչպէս քաղցր այն հծծիւնն որով սիրովաւ պատանին իր սիրեցելոյն ականջէն կը յայտնէ իր սրտին կրակն, և բոլոր այդ փոքր ու մրմունջներու պէս նուազ ազմուկները միանալով խուլ ձայն մը կը կազմէին, որ կը նմանէր տեւեւոց դանդաղ սօսափիւններն, երբ հովը կուգայ իր համրոյրներով զանոնք սարսաղացնել:

Ու կ'անցնէի բոլոր այս չքեղութեանց մէջէն, հետեւելով Դիցուհւոյն որ կը դիմէր դէպի խորն անսահման պալատին. հետզհետէ կը սաստկանար յափշտակութիւնս, նորանոր զգայութիւններ կը խուժէին վրաս, ու անձառելի հեշտութիւն մը ամբողջ մարմնոյս վրայ կը հոսէր. սիրտս կը լցուէր անծանօթ գերագոյն նեկտարով մը. փոքր ու մեղմ շունչեր կուգային ճակատս փայփայել թաւշեայ համբուրիներու պէս. գլխուս վրայէն կարմիր ճերմակ ձիւնի հատիկներու նման անթիւ

հրեշտակիկներն իրենց թեւերը ճոճելով կը թռչնէին, մեղմոնուազ երաժշտութեամբ մը օդը չեցնելով:

Քանի որ կը յառաջանայինք, նորանոր կամարներ իրենց գալարուն սիւներովը կը բացուէին. մեր առջեւ, և բոլոր այդ կամարներուն տակ կը նշմարէի հեռուէն հոյիւն գեղեցիկ սպիտակ աղջկանց որք ծաղիկներով պճնած իրենց ոսկի մագերը, կը պարէին, իրենց շնորհալից ոտմանց մէջ ամենէն սիրուն ձեւերը տալով իրենց մարմնոյն: Բայց քանի որ կը մօտենայինք, այդ պարերն և այդ աղջկունք խոյս կուտային կարմիր, կապոյտ ամպերու մէջ ու կը ցնդէին կ'անհետանային. ծուխին պէս որ գալարուելով կ'ելնէ ծխնելոյզէն և կ'երթայ-կորսուի երկնից կապոյտին մէջ:

Պացինք, գացինք, գացինք... Այժմ ամանակի գաղափարը կորուսած էի ինձ կը թուէր թէ հոգ ապրած էի միշտ և թէ յաւիտեան հոգ պիտի մնայի. յոգնութիւնն անծանօթ էր ինձ, և թեթեւ ինչպէս հոգն որ ցորեններու կատարին վրայէն կ'անցնի հազիւ անդադու մը տալով անոնց, կը սահէի կախուղ յատակին վրայէն ու կը հետեւէի անբարբառ Դիցուհւոյն:

Յանկարծ կանգ առաւ նա. չորս կողմն նայեցայ, բոլորչի սրահ մը հասած էինք որուն սլայծառութիւնն ու ճոխութիւնը կը գերազանցէին ամեն ինչ որ տեսած էի ցայն վայր: Դիտեցի մանաւանդ երեք մեծ գահեր որոց մին, ամենէն մեծն ու փառաւորը, դատարկ էր. միւս երկուքին վրայ բազմած էին երկու կիներ, ժպտուն ու լուին, մանկամարդ ու գեղանի:

Ելաւ իմ Առաջնորդուհիս և այն մեծ գահին վրայ նստաւ: Ծռնք դրի գետինն ու իր նայուածքէն մագնիսացեալ, կարծես կ'սպասէի հանդիսաւոր բանի մը որ պիտի կատարուէր: Յոսին ելաւ յանկարծ մին երկու կանանց, և աչքերը վեր վերցնելով բազուկները կուրծքին վրայ ծալելոց ու սկսաւ երգել. ինչպէս ջրեղէն որայներն որք կը ժայթքին շատրուանի մը ծորակներէն, այնպէս յորդ կը նետուէին խաղերն իր լայն կուրծքէն որ կ'ուռէր եւս քան զիս հոգմով լցուած սպիտակ առաջաստի մը նման. մերթ իր ձայնը կը բարձրանար ու կը գոռար այն անհղ

ուրականներուն պէս որք իրենց ամենի մեղքներուն մէջ արեւելեաց կործանումը կարծես կ'երգէն: մերթ կը թաւալէր, կը հոսէր նա հանգոյն առնալի մը որ գայլախաղները ծեծելով, ափանց խոտերն համբուրելով, մրմնջելով կը վազէ, և մերթ կը ճուռողէր սոխակին պէս որ ներդաշնակութեան կաթիլներ կը հոսեցնէ անտառաց մթութեան մէջ, և հիացած կը դիտէի իր ամբիժ մարմինն որ կը տատանէր ու կը դողար, քնարի մը նման որուն ամբողջ լարերը կը թրթռան արուեստագիտին մատանց տակ:

Երբ դադարեցուց իր երգն ասպուածա՞յին այդ կինը, միւսն ելաւ կանգնեցաւ, և բազուկները բանալով սկսաւ բռնելու հեղեղ մը թափել իր կարմիր շրթներէն. իր աչքերն այնչափ անուշ էին որ անոնց կապոյտին մէջ մարդ խղուել պիտի բաղձար, և քանի որ կը խօսէր, այդ աչքերն աւելի կը վառէին, աւելի փայլուն դայն կ'ստանային, այդ բառերն, ներդաշնակ ու երկներանգ այդ բառերն, այնպիսի քաղցրութեամբ կ'ընային իր բերնէն, որ անբացատրելի երաժշտութիւն մը կը կադմէին, ու հետզհետէ կը կարմրէին այտերն, երկայն մազերուն սեւ հիւսկէներն իր գլխուն եռանդուն շարժմանց հետ կը տատանէին ու կը գալարուէին թուխ օձերու պէս իր մարմնոյն չուրջն, իր ձեռքերը կ'ենէին կ'իջնէին օդին մէջ ընկերանալով իր շնչառութեան: Քիչ բան կը հասկնայի այդ բառերէն որ գերերկրաշին խոր իմաստներ անշուշտ կը պարունակէին. բայց կը թուէր ինձ թէ անոնց գլխաւոր նիւթը Սէրն էր. յաւիտենական սէրը, գերադոյն՝ զօրութիւնն ու մայր ճարրը բնութեան:

Երբ ինքն ալ դադարեցաւ խօսելէ, և երբ լռութիւնը արեւց սրահին մէջ, սաքի ելայ, խառնած, թմրած, գրեթէ ոգեւորաւ անպատում երանութեան մը ծանր բեռին տակ, և, յառաջանալով դէպի Դիցուհին, ըսի անոր պաղատագին ձայնով մը.

«Ո՛վ դու որ զիս եկար իմ վիշտերուն մէջ սփռել, պիտի մերժե՞ս կատարել վերջին խնդիրքս, պիտի չըսե՞ս ինձ թէ ո՞վ ես դու, օրհնեա՛լ Դիցուհի»

Ժպտեցաւ նա, և ահա ինչ որ ըսաւ ինձ յայնժամ:

«Քիչեր, զիս օրհնած են, ազնիւ սպտանի, զի քիչեր ճանչցած են իմ ճշմարիտ զօրութիւնս. քու եղբայրներդ կը մերժեն հետեւիլ ինձ այս եթերային բարձրութեանց մէջ, ու կը ծիծաղին իմ վրաս իրենց յիմար արհամարհանքն իմ երեսիս նետելով. բայց իրենք միշտ ձեր ժահահոտ աշխարհին թանձր ճահճին մէջ թաղուած կը սողան, և անոնք որ եկան այցելել իմ սպառտս և արբեցաւ այն հեշտութիւնը զոր ես կը մատուցակեմ, անոնք միայն ճանչցան միակ ճշմարիտ երջանկութիւնն որ կայ այս տիեզերաց մէջ:

«Ե՛ս Երեւակայութիւնն եմ, դուստր երկնից և ծովուն, որ իմ օգնձեմ բնակարանս հաստատած եմ, ամպերէն, արեւներէն, աստղերէն վեր, այս մաքուր և անմատոյց մթնոլորտին մէջ. այս երկու կիներն իմ կրտսեր քոյրերս են, երկնային Երաժշտութիւնն և սուրբ Ֆանաստեղծութիւնն, որոնց հետեւոր մէկ արձագանգը միայն կը հնչէ երբեմն մարդոց ոմանց հոգւոյն մէջ. այն խուսափուկ պարող հուրները զորս տեսար կամարներուն տակ, Պատրանքներն են, աղջիկներս, և այն հրեշտակիկներն որ սպառտիս մէջ կը թռչտին, Երազներն են, քաղցրացուցիչ Քնոյ որ անդրանիկ դուստրս է»

«Ունկն կը գնէի յակճիւս իր խօսքերուն, երբ յանկարծ ցնցում մը զգացի որ սպառտը դղրդեց. որմերէն միոյն մէջ դուռ մը բացուեցաւ, ու նշմարեցի բարձրահասակ կին մը որ, յամրաքայլ և լռի, ներս կը սպրդէր, ամբողջ մարմնը ծածկնած էր՝ սեւ շղարշներու տակ որոնց մէջէն իր աչքերը միայն կը տեսնուէին, երկու փոքր ու պսպղուն աստղեր ոյց դիւթիչ լոյսը կը թմրեցնէր, կը գինովցնէր. իր գլխուն վրայ խաշտաշնրէ. հիւստեած փունջ մը դրուած էր, և իր մազերը, խիտ և աւելի մութ քան իր հանդերձները, սեւ հոսանքի մը նման իր ծոծրակէն վար կը թափէին և դալարուելով մինչեւ ոտները կ'իջնէին. իր ետեւէն կուգար լուսմբ մը այն փոքր ու թեւաւոր կակներէն որք կը թռչտէին անհուն սպառտին մէջ:

Այն ատեն ըստ ինձ Դիցուհին վերջին ժպիտ մը արձակելով վրաս, «Բայց ահա կը հնչէ բաժանման ժամը, առաւօտն արդէն սկսած է վարդերը թափել ձեր աշխարհին վրայ, ահա Քուսը որ անկից կը դառնայ, թողլով մարդկութիւնն իր յաւիտենական ցաւերուն մէջ. երթաւ բարեալ, մահկանացու: Յիշէ՛ զիս երբ վիշտերը վրադ խոժեն, և կոչէ զիս երբ պէտք զգաս սիրտիւս»:

Եւ յանկարծ տեսայ որ ամեն բան շուրջս աղօտ մառախուղի մը կը փոխուէր, որուն մէջ կը ցնդէին փոքր հրեշտակներուն հոյերն, ու փողփողուն սրահներն, ու լոյսերն, ու գոհարներն, ու աստղերն, և ամենուն հետ մեծապայծառ Դիցուհին...: Եւ ահա զգացի որ անծանօթ ձեռք մը զիս եթերային այդ բարձրութիւններէն վար կը գահավիժէր...: Երբ աչքս բացի, տեսայ զիս իմ ամայի ծովափիս վրայ, վիթխարի ծառերուն ասուերին տակ: Հորիզոնին նայեցայ, լոյսը կը ծնէր խաւարին ծոցէն, և հրեղէն բամբակներու խանձարուրքի մը մէջէն դուրս կը ցատէր լուսնիկն երախայն:

ՅԱՆԹԱՋԻՕ

ՅՈՒՂԱՐԿԱԽՈՐՈՒԹԵՆԷ

Դ Ա Ր Ձ Ի Ն

(ՊՍՏԿԵՐ)

—Էյ, հերիք է, Միրանիկ աղա, աղայ մի՛ ըլլար: Աստուծոյ կամքին դէմ ի՞նչ կրնանք ընել: Մեր ամենուս ալ ըլլալիքը ատիկա չէ՞: Իրա՛ւ, մենք ալ կը ցաւինք, ֆախ՝ ձեռուընուս ի՞նչ կուգայ: Աստուծոյ հրամանին հնազանդելէ ուրիշ ճար չիկայ:

Ու եօթն ութ հոգի այս յանկերգին վրայ կը ջանային մխիթարել իրենց մէջ տեղն առած մարդ մը, որուն երկու թեւերէն մեծած էին, և ուր կը ջանար սեւածիր ձերմակ թաշկինակով մը արցունքը սրբել, ձեռքը դողդղալով՝ դանդաղօք սրունքներուն ցնցումներուն համեմատ:

Գերեզմանատունէն կը դառնային, ուր գացեր էին ներկայ գտնուելու Միհրանիկ աղային կնոջը թաղման հանդէսին: Շուկայի ընկերներ էին խելճ մարդուն, ամէնքն ալ խանութպան մարդիկ, որք իրենց միամիտ ու սիրտ բռն լսութարանքներով, կ'ուզէին մեղմացնել իրենց բարեկամին ցաւը:

—Ա՛խ, մոռցուերու՞ կնիկ է, հեճկըլ աաց Միհրանիկ աղան՝ սիրտը դարձեալ պոռթկալով:

Ընկերներն իրարու երես նայեցան, ձեռուընին բանալով ու աչուրնին դէպի երկինք դարձնելով: Այնքանուն մէկը, թումաճան աղան, որուն աչուըններն ալ արցունքով լեցուած էին, հանձարեղ գաղափար մը ունեցաւ այն ատեն: Իբ ընկերներուն սկանջն ի վար ծռելով մէկ քանի խօսք փափաց, և ամէնքը մէկէն իրենց քայլերն ուղղեցին դէպի մերձակայ գիւնեատուն մը:

—Չէ՛, ոտուընիդ սրագնեմ, թոթովեց Միհրանիկ աղան, ձգեցէք տուն երթամ:

—Տղայ մի՛ ըլլար. կտոր մը կը բացուիս:

Գինեպան Մարտիկ աղան արդէն ա-

նետուած էր, նայուածքով մը հասկցած գործին էութիւնը, Միհրանիկ աղային ձեռքը բռնելով՝ ցաւած սրտով «Գլուխդ ողջ կենայ» մը սահեցուցած էր, և արդէն տիրապետական շեշտով կը հրամայէր.

—Ծօ՛, Համբի՛կ, մաստիքա պեր հուսա:

Մինչդեռ ինք կ'երթար խնամով Բե՛կ մը պատրաստել, և երկու երեք վայրկեան յետոյ նոր տապկած տաք Բե՛կը կը բերէր յաճախորդներուն:

Գաւաթները լեցուեցան ու պարպուեցան: Տասն վայրկեան ուրիշ բան չլսուեցաւ բայց եթէ գաւաթներու ընդհարումներ, պատառաքաղներու շխրտոցներ և լայն ու հաստ շրթունքներու շաշխններ:

—Աս մարդուն ալ մաստիքան «Ե՛կ է, գլխու կը դարնէ կոր, ըսաւ վերջապէս Թումաճան աղան, պէսերը սրբելով: Հաճի Յուսեփին քովը պատուական մաստիքա մը կայ. անցած օր չիշէ մը լեցունել տուի նորէն. Եղի պէս վար կ'երթայ կոր:

Եւ սակայն ինք լեցուց նորէն դաւաթներն, ու իրենը պարպեց մէկ ումպով: Իր լայն ու տափակ այտերն սկսած էին արդէն կարմրիլ:

—Ձեռ խմեր կոր, Միհրանիկ աղա:

—Ա՛խ, սիրտ ունիմ է՛, հեծկտաց խեղճ մարդը, նորէն լալ սկսելով: Տասը տարի էր որ էրիկ կնիկ էինք, օր մը իրարու խառնախօս ըսած չունէինք: Ի՛նչ կնիկ էր, ի՛նչ կնիկ էր. Ա՛լ աս կեանքը հաւած է ինծի. Բե՛կն անանկ կուգայ կոր որ դարնեմ մեռցունեմ ինքզինքս:

Ու, առանց իր գաւաթին ձեռք-դըպցնելու, գլուխը կախեց արտամութեամբ, լռին սրբելով արցունքները:

Քառորդ ժամ մը անցաւ. գաւաթները կը պարպուէին և չիշերն իրարու կը յաջորդէին անընդհատ: Թումաճան աղան կաս կարմիր կտրած էր:

—Ձը խմե՛ս, Միհրանիկ աղա:

—Ձգէ՛, սիրտ չունիմ, ըսաւ Միհրանիկ աղան լալկան ձայնով:

—Է՛յ, դուն իրա՛ւ տղայ ես եղեր, ըսաւ Թումաճան աղան, լեզուն արդէն բերնին մէջ ծանրցած: Աղչափ ցաւ ընելուն անզը չիկայ: Իրա՛ւ, կնիկդ էր, աս

նայինք ան աղչափ պիտի ցաւէ՞ր քուկին վրադ: Ինծի զուրցունել մի՛ տար:

Եւ որովհետեւ Միհրանիկ աղան ապուշ դէմքով իրեն կը նայէր,

—Է՛յ ասէ՛ չի զուրցեմ ըսի ամա, շարունակեց Թումաճան աղան, վրադ նայելով սիրտս կտոր կտոր կ'ըլլայ կոր: Կնիկդ աղչափ ցաւելու մէկը չէր, ամէնուն բերանն էր, ձեր տրացինին մեծ տղուն հետ ըրածները աշխարհք գիտէ:

Միհրանիկ աղան ցնցուեցաւ, իր ընկերներուն այլայլած դէմքէն ու բռնագոսիկ լուծենէն կուահեց ճամարտութիւնն, իր մտքին մէջ յանկարծ արթննալով զանազան պարագայներ ու դէպքեր որոց ատենօք կարեւորութիւն չէր տուած և որք հիմակ կ'արդարացնէին այդ գինովին թուրբերանութիւնը, և շտկուելով,

—Վա՛յ, ատա՞նկ է մի:

Ու արցունքները դադրած, դէմքը պայծառացած, գինեպանին դառնալով, ծանր բեռէ մը ազատած մարդու մը ուրախ ու վստահ շեշտով գոչեց.

—Մարտիկ աղա, էրկու չիշէ մաստիքա բեր հոս, քիչ մըն ալ Բե՛կը տապկէ մեզի:

ԹԱՓԱՌԻԿ

Արտօնատէր

Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ